Փաստ. անվանումը/ Doc. name	Միջազգային շարժունության կազմակերպման կարգ/ Regulations on organizing international mobilities
Փաստ. N/ Doc. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-47-02
Հաստատման ամսաթիվը/ Approval date	03/10/2019
Վերջին վերանայման ամսաթիվ/ Last review date	11.10.2021
Հաստատող մարմինը/ Approving authority	Գիտական խորհուրդ/ Scientific Council
Մշակող/ Developed by	Որակի ապահովման կենտրոն/ Quality Assurance Centre
Ներդրման պատասխանատու/ Responsible for implementation	Միջազգային կապերի կենտրոն/ International Relations Centre

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ/ AMENDMENTS TO THE DOCUMENT

N	Ամսաթիվ/ Date	Կատարված փոփոխություն/ Description of amendment	Անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն/ Name, surname, position, signature
	11.10.2021	Ավելացվել են ուսանողների ընտրության նոր ընդհանուր դրույթներ ուսանողների արտագնա շարժունության կազմակերպման բաժնում (կետեր 2.2, 2.3, 2.4, 2.5):/ Several new general provisions have been added to the organization of outgoing student mobility (Points 2.2, 2.3, 2.4, 2.5).	Սուրեն Օհանյան Գիտական խորհրդի նախագահ
	11.10.2021	Վերախմբագրվել են ասպիրանտի/ հայցորդի ընտության չափանիշները. «Գիտական նվաճումներ» կետը վերափոխվել է որպես «Կրթության և գիտության ոլորտում նվաճումներ և/կամ մասնագիտական փորձառություն», և «հետազոտական պլան» բառակապակցությունից հետո ավելացվել է «հաստատված թեմային համապատասխան» եզրույթը:/ Postgraduate student selection criteria have been revised: the phrase "Scientific achievements" has been amended to "Educational and scientific achievements and/or professional experience", after the "research plan" phrase "according to the approved topic" has been added.	Սուրեն Օհանյան Գիտական խորհրդի նախագահ
	11.10.2021	Ավելացվել է 5-րդ բաժինը. Միջազգային ծրագրերում ներգրավված ուսանողների/ աշխատակիցների Ընտրական հանձնաժողովի ձևավորումը:/ The 5th Chapter has been added "Establishment of the international mobility participants (students and staff) Selection Committee"	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ

1. Միջազգային շարժունության կազմակերպման հիմնական սկզբունքները

1.1. Արդար մրցակցության ապահովում;

1.2. Երաշխավորված անկողմնակալություն, թափանցիկություն և արդարություն. շահերի բախման բացակայություն;

1.3. ԵՄՀ բակալավրիատի, մագիստրատուրայի ուսանողները, ասպիրանտներն ու հետազոտողները, աշխատակազմը (պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմ) իրավասու են մասնակցել շարժունությանը;

1.4. Շարժունությունն իրականացվում է բուհերի միջև կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա;

1.5. Հավասար պայմաններում առաջնահերթությունը տրվում է շարժունությանը երբևէ չմասնակցած ուսանողներին և աշխատակիցներին;

1.6. Դասավանդման շարժունության (teaching mobility) դեպքում նախապատվությունը տրվում է հիմնական կարգավիճակով դասավանդողներին և գիտական աստիճան ունեցողներին;

1.7. Վերապատրաստման շարժունությանը (training mobility) կարող են մասնակցել և վարչական/ ուսումնաօժանդակ աշխատակիցները, և դասախոսները;

1.8. Ընտրության չափանիշները կանոնավոր կերպով թարմացվում են բուհի կողմից;

1.9. Ընդունող համալսարանը, անհրաժեշտության դեպքում, կարող է ներառել ընտրության լրացուցիչ չափանիշներ;

1.10. Վերջնական որոշման կայացման իրավունքը պատկանում է ընդունող համալսարանին:

1. The basic principles of organizing international mobility

1.1. Fair Competition;

1.2. Guaranteed impartiality, transparency and fairness. No conflict of interest;

1.3. Undergraduate and graduate students, researchers, faculty and administrative staff are eligible participants;

1.4. Mobility must be organized on the basis of a bilateral agreement;

1.5. The priority is given to the first-time mobility participants;

1.6. For teaching mobility the preferences are given to those faculty members who are employed on a full-time basis at EIU and hold scientific degrees;

1.7. Both administrative and academic staff members can participate in training mobilities;

1.8. Regular update of the selection criteria is made;

1.9. The host university can include additional criteria for selection, if necessary;

1.10. The right of last decision belongs to the host university.

2. Ուսանողների արտագնա շարժունության կազմակերպումը

2.1. Շարժունության նախնական ընտրության ժամկետները սահմանվում են ԵՄՀ-ի կողմից:

2.2. Շարժունությանն իրավասու չեն մասնակցել բակալավրիատի 1-ին կուրսի և մագիստրատուրայի 1-ին կիսամյակի ուսանողները, ինչպես նաև ավարտական կիսամյակի ուսանողները: Նշյալ կուրսի ուսանողները կարող են ընտրվել միայն բացառիկ դեպքերում՝ Ընտրական հանձնաժողովի որոշմամբ:

2.3. Մագիստրատուրայի 1-ին կիսամյակի ուսանողները կարող են շարժունության մասնակցել՝ ներկայացնելով բակալավրիատի ամփոփիչ միջին որակական գնահատականը, եթե հանդիսանում են ԵՄՀ բակալավրիատի շրջանավարտ:

2.4. Եթե ուսանողը ԵՄՀ կրթաթոշակառու է և միաժամանակ արժանացել է միջազգային կրթաթոշակի՝ ԵՄՀ փոխանակման ծրագրերի շնորհիվ, ապա պարտավորվում է շարժունության իրականացման կիսամյակի ուսման վարձը վճարել ԵՄՀ-ում:

2.5. Հավասար պայմաններում ընտրության առաջնահերթությունը տրվում է ՀՀ քաղաքացի հանդիսացող ուսանողին:

2.6. Ընտրված ուսանողի, ուղարկող և ընդունող բուհերի միջև կնքվում է եռակողմ պայմանագիր (պրակտիկայի դեպքում՝ քառակողմ), որն անհրաժեշտության դեպքում, կարող է վերանայվել շարժունության ընթացքում (կրկին եռակողմ համաձայնությամբ, պրակտիկայի դեպքում՝ քառակողմ): Պայմանագրում հստակեցվում են կրթական ակնկալիքները:

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ.

1. Բակալավրի և մագիստրատուրայի ուսանողների համար՝

2. Organization of outgoing student mobility

2.1. The date of the first selection will be determined by EIU.

2.2. The first-year BA students and the first-semester MA students, as well as final-semester students are not eligible to participate in the mobility program. These students can be selected only in exceptional cases by the decision of the Selection Committee.

2.3. First-semester MA students can participate in mobility by submitting the cumulative grade point average of the bachelor's degree if they are an EIU BA alumni.

2.4. If the selected student is already benefiting from EIU scholarship, he/she is obliged to pay the tuition fee for the semester of mobility implementation at EIU when receiving EIU international mobility Scholarship.

2.5. Under all equal conditions the priority is given to Armenian students

2.6. A trilateral agreement is signed between sending and hosting institutions and the student (quadrilateral agreement in case of traineeship), where clear terms of exchange and subject lists are provided. Amendments can be made again by the approval of three/four parties.

CRITERIA FOR SELECTION:

1. Selection Criteria for BA and MA applicants:

- Բարձր առաջադիմություն (նվազագույնը՝ 3.0 ՄՈԳ) - 50%,
- Անգլերեն լեզվի իմացություն (նվազագույնը՝ B1 մակարդակ) - 40%,
- Հասարակական ակտիվություն/ կամավորական աշխատանքների մասնակցություն - 10%:

2. Ասպիրանտների և հետազոտողների համար՝
   - Հետազոտական պլան՝ հաստատված թեմային համապատասխան - 40%,
   - Կրթության և գիտության ոլորտում նվաճումներ և/կամ մասնագիտական փորձառություն - 30%
   - Անգլերեն լեզվի իմացություն (նվազագույնը՝ B2 մակարդակ) - 30%:

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.

1. Ակադեմիական տեղեկանք՝ նախորդող կիսամյակի ՄՈԳ-ը փաստող գնահատականների ներդիրով (անգլերեն լեզվով),
2. Անգլերենի իմացությունը հավաստող փաստաթուղթ (ԵՄՀ-ի կողմից տրված տեղեկանքը ևս բավարար է փոխանակման համար),
3. Ինքնակենսագրություն (Europass ֆորմատով),
4. Մոտիվացիոն նամակ (անգլերեն լեզվով),
5. Եռակողմ պայմանագրի նախագիծ (ձևաչափը տրամադրվում է հյուրընկալող բուհի կողմից),
6. Հետազոտական պլան (ասպիրանտների և հայցորդների համար):

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.

1. Եռակողմ պայմանագրի բնօրինակը՝ կնքված ընդունող բուհի կողմից (պրակ-

- Academic merit /minimum GPA 3.0/ - 50%,
- Proficiency in English /minimum B1/ - 40%,
- Extracurricular activities - 10%.

2. Selection Criteria for PhD students and researchers:
   - Research Plan based on approved research topic - 40%,
   - Educational and scientific achievements and/or professional experience - 30%,
   - Proficiency in English /minimum B2/ - 30%:

REQUIRED DOCUMENTS FOR SELECTION:

1. Transcript of records (with translations into English),
2. Language certificate (a statement given by EIU is enough for exchange students),
3. CV (in Europass format),
4. Motivation letter (in English),
5. Draft trilateral agreement (template will be provided by the host university),
6. Research plan (for PhD students and researchers only).

REPORT DOCUMENTS AFTER THE MOBILITY:

1. Learning Agreement for Studies/ Learning Agreement for Traineeships approved, signed and stamped by the sending institution, the host institution and the student;
2. Transcript of Records given by the host institution, indicating the academic performance of the student and the study credits received,

տիկայի դեպքում՝ քառակողմ);

2. Ակադեմիական տեղեկանք ընդունող բուհի կողմից՝ գնահատականների ներդիրով և գնահատման համակարգի պարզաբանմամբ;
3. Մասնակցած դասընթացների առարկայական ծրագրերը (ծրագրերի բացակայության դեպքում՝ առարկայական վերջնարդյունքները),
4. Վկայագիր՝ գործատուի մոտ անցկացրած ժամանակահատվածի և ցուցաբերած արդյունքների գնահատման նշումով (պրակտիկայի դեպքում):

Շարժունությանը մասնակցած ուսանողները պարտավոր են վերադառնալով՝ ներկայացնել ընդունող բուհը կլոր սեղան-քննարկման ընթացքում և կազմակերպել աշխատաժողով ստացված գիտելիքները մյուս ուսանողների հետ կիսելու նպատակով: Հետազոտողները ներկայացնում են իրենց հետազոտությունների արդյունքները:

3. Աշխատակազմի արտագնա շարժունության կազմակերպումը

3.1. Շարժունության նախնական ընտրության ժամկետները սահմանվում են ԵՄՀ-ի կամ գործընկեր բուհի կողմից:

3.2. Ընտրված աշխատակցի/ դասախոսի, ուղարկող և ընդունող բուհերի միջև կնքվում է եռակողմ պայմանագիր: Պայմանագրում հստակեցվում են դասավանդման և վերապատրաստման ակնկալիքները:

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ.

1. Դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության համար կարևորվում են՝
   - Առնվազն մեկ տարվա դրական աշխատանքային (դասախոսների դեպքում՝ դասավանդման) փորձի առկայությունը ԵՄՀ-ում – 40%

grading system;

3. Syllabi of attended courses (learning outcomes in case of syllabi absence);
4. Certificate for the practical training of the student and the recognized study credits (for traineeships only).

The exchange program participants must arrange round-table discussions and workshops to share the knowledge upon return. The researchers and PhD students share the results and outcomes of the research.

3. Organization of outgoing staff mobility

3.1. The date of the first selection will be determined by EIU.

3.2. A trilateral agreement is signed between sending and hosting institutions and the staff member, where clear terms of exchange and visit plan are provided.

CRITERIA FOR SELECTION:

1. Selection Criteria for administrative and academic staff members:
   - Positive work experience at EIU (at least for one year) - 40%,
   - Proficiency in English /minimum B2/ - 30%,
   - Motivation and specific interest in future professional projects on side of the staff - 30%:

- Անգլերեն լեզվի իմացությունը (առնվազն B2 մակարդակ) – 30%
- Աշխատակցի/ դասախոսի մոտիվացիան և այցից հետո ԵՄՀ-ին փոխանցվող ավելացված արժեքի ու աշխատանքի արդյունավետության բարձրացման հիմնավորումները - 30%:

2. Պրոֆեսորադասախոսական կազմի համար պարտադիր նախապայման է գիտական աստիճանի առկայությունը:
3. Դասախոսական և վարչական աշխատակիցների տվյալները ուսումնասիրելիս մասնակցության ԵՄՀ նախապայմաններից և ընդունող բուհի ներկայացրած պահանջներից զատ առաջնահերթությունը տրվում է՝
    - ԵՄՀ-ում հիմնական կարգավիճակով աշխատողներին,
    - Ժամկետում գտնվող IELTS կամ TOEFL քննությունների արդյունքներ ունեցողներին,
    - 3 տարի և ավելի ԵՄՀ-ում աշխատողներին,
    - Գնահատման արդյունքներով նվազագույնը 65% ապահոված աշխատակիցներին:

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.

1. Անգլերենի իմացությունը հավաստող փաստաթուղթ (ԵՄՀ-ի կողմից տրված տեղեկանքը ևս բավարար է փոխանակման համար),
2. Ինքնակենսագրություն (Europass ֆորմատով),
3. Եռակողմ պայմանագրի կամ այցի պլանի նախագիծ (ձևաչափը տրամադրվում է ԵՄՀ-ի կողմից):

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.

1. Եռակողմ պայմանագրի բնօրինակը՝ կնքված ընդունող բուհի կողմից,

2. For teaching mobility presence of a scientific degree is obligatory.
3. For teaching and training mobilities the priorities are given to the following Academic and Administrative staff members:
    - Who are employed on a full-time basis at EIU;
    - Who have achieved IELTS or TOEFL certificates;
    - Who have worked at EIU for more than 3 years;
    - Who have scored above 65%, as a result of assessment.

REQUIRED DOCUMENTS FOR SELECTION:

1. Language certificate (a statement given by EIU is enough for exchange participants),
2. CV (in Europass format),
3. Draft trilateral agreement (template will be provided by the host university).

REPORT DOCUMENTS AFTER MOBILITY:

1. Mobility Agreement for training/ Mobility Agreement for teaching approved, signed and stamped by the sending institution, the host institution and the staff,
2. Copy of the Certificate of Attendance.

The exchange program participants must arrange round-table discussions and workshops to share the knowledge upon return.

2. Մասնակցության հավաստագրի պատճենը:

Շարժունությանը մասնակցած աշխատակիցները և դասախոսները պարտավոր են վերադառնալով՝ ներկայացնել ընդունող բուհը և փորձառությունը՝ կլոր սեղան-քննարկման ընթացքում:

4. Ուսանողների և աշխատակիցների ներգնա շարժունության կազմակերպումը

4.1. ԵՄՀ ժամանող ուսանողների, դասախոսների և աշխատակիցների վերջնական ընտրությունն իրականացնում է ուղարկող բուհը և առաջադրում նրանց թեկնածությունը վերջնական հաստատման համար, եթե այլ պայմանավորվածություն առկա չէ ուղարկող և ընդունող բուհերի միջև:

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.

1. Ժամանող ուսանողների համար՝
   - Դիմում հայտ,
   - Անձնագրի լուսապատճեն,
   - Ակադեմիական տեղեկանք՝ նախորդող կիսամյակի ՄՈԳ-ը փաստող գնահատականների ներդիրով և գնահատման համակարգի պարզաբանմամբ (անգլերեն լեզվով),
   - Անգլերենի իմացությունը հավաստող փաստաթուղթ (ուղարկող բուհի տրամադրած փաստաթուղթը ևս ընդունելի է),
   - Ինքնակենսագրություն (Europass ֆորմատով),
   - Մոտիվացիոն նամակ (անգլերեն լեզվով),

4. Organization of incoming student and staff mobilities

4.1. The final selection of incoming students and staff is made by the home university, but the right of final approval belongs to the host university.

REQUIRED DOCUMENTS FOR FINAL SELECTION:

1. For students:
   - Application,
   - Copy of passport,
   - Transcript of Records given by the home university, indicating the academic performance of the student and the study credits received, grading system (in English),
   - Language certificate (a statement given by the home university is enough for exchange students),
   - CV (in Europass format),
   - Motivation letter (in English),
   - Draft trilateral learning agreement,
   - Research plan (for PhD students and researchers only).
2. For staff:
   - Language certificate (a statement given by the home university is

- Եռակողմ պայմանագրի նախագիծ,
- Հետազոտական պլան (ասպիրանտների և հայցորդների համար):

2. Ժամանող դասախոսների և աշխատակիցների համար՝
   - Անգլերենի իմացությունը հավաստող փաստաթուղթ (ուղարկող բուհի տրամադրած փաստաթուղթը ևս ընդունելի է),
   - Ինքնակենսագրություն (Europass ֆորմատով),
   - Եռակողմ պայմանագրի կամ այցի պլանի նախագիծ:

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.

1. Ուսանողներին տրամադրվում է՝
   - Եռակողմ պայմանագրի բնօրինակը՝ կնքված ընդունող բուհի կողմից,
   - Մասնակցության հավաստագիր,
   - Ակադեմիական տեղեկանք ընդունող բուհի կողմից՝ գնահատականների ներդիրով և գնահատման համակարգի պարզաբանմամբ (անգլերեն լեզվով),
   - Ուղարկող բուհի կողմից պահանջվող այլ փաստաթուղթ:
2. Դասախոսներին և աշխատակիցներին տրամադրվում է՝
   - Եռակողմ պայմանագրի բնօրինակը՝ կնքված ընդունող բուհի կողմից,
   - Մասնակցության հավաստագիր,
   - Ուղարկող բուհի կողմից պահանջվող այլ փաստաթուղթ:

5. Միջազգային ծրագրերում ներգրավված ուսանողների/աշխատակիցների Ընտրական հանձնաժողովի ձևավորումը

enough for exchange participants),
- CV (in Europass format),
- Draft trilateral mobility agreement.

DOCUMENTS PROVIDED BY EIU AFTER THE MOBILITY:

1. For students:
   - Learning Agreement for Studies/ Learning Agreement for Traineeships approved, signed and stamped by EIU,
   - Certificate of Attendance,
   - Transcript of Records given by EIU, indicating the academic performance of the student and the study credits received, grading system (in English),
   - Other documents required by the sending university.
2. For staff:
   - Mobility Agreement for training/ Mobility Agreement for teaching approved, signed and stamped by EIU,
   - Certificate of Attendance,
   - Other documents required by the sending university.

5. Establishment of the international mobility participants (students and staff) Selection Committee

5.1. Միջազգային շարժունության մասնակիցների ընտրության իրականացման և սույն կարգի պահանջների ամբողջական ներդրման ապահովման նպատակով ուսումնական տարվա մեկնարկին՝ Գիտական խորհրդի որոշմամբ ձևավորվում է Ընտրական հանձնաժողով:

5.2. Հանձնաժողովը պետք է կազմված լինի առնվազն 4 անդամից:

5.3. Հանձնաժողովի կազմում ի պաշտոնե ներգրավված են Միջազգային կապերի կենտրոնի պատասխանատուն (հանձնաժողովի քարտուղար) և Ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորը:

5.4. Եթե Որակի ապահովման կենտրոնի ղեկավարը ներառված չէ Հանձնաժողովի կազմում, ապա կարող է խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել նիստերին՝ գործընթացի գնահատման նպատակով:

5.5. Հանձնաժողովի այն անդամը, որը մրցույթի մասնակիցների ցանկում է, չի մասնակցում հանձնաժողովի այդ նիստին և իրավասու չէ ազդելու որոշման կայացման վրա:

5.1. The Selection Committee is formed by the decision of the Scientific Council at the beginning of the academic year, in order to ensure the full implementation of the regulations and the selection of international mobility participants.

5.2. The Committee must be made up of at least four members.

5.3. The Head of International Relations Centre (Secretary of the Committee) and the Vice-Rector on Educational Affairs shall be involved in the Committee.

5.4. In case Head of the Quality Assurance Centre is not involved in the Committee, he/she can attend the Committee meetings for the process evaluation purposes.

5.5. The Committee member who is also in the list of participants, shall not attend the selection meeting and is not authorized to influence the decision-making process.